ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1955 Общественные науки

Ե. ՍԱՐԳԻՍՈՎ — «ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՅՈՒՐՔԻԱՅՈՒՄ»

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակությամբ ռուսերեն լեզվով լույս է տեսել Ե. Կ. Սարգիսովի «Աշխատավոր մասսաների դրությունը ժամանակակից Թյուրքիայում» աշխատությունը, որի մեջ հեղինակը փաստական հարուստ նյութերի օգտագործմամբ ցույց է տալիս Թյուրքիայի աշխատավոր մասսաների ծանր վիճակը՝ քեմալիստների իշխանության գլուխն անցնելուց սկսած մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտումը, ինչպես և աշխատավոր մասսաների ծայրահեղ աղքատացումը Թյուրքիայում, հետպատերազմյան տարիներին։

Գրախոսվող գրքում պատմական անժխտելի փաստերի հիման վրա մերկացվում է Թյուրքիան մասնատելու, և այն գաղութի վերածելու Անտանտայի իմպերիալիզմի ռեակցիոն քաղաքականությունը։

Ե. Կ. Սարգիսովը հանգամանորեն կանգ է առնում պատմական այն իրողության վրա, որ միայն Սովետական պետությունը, հակառակ իմպերիալիստական լաղերի, իր գոյության առաջին իսկ օրից հանդես եկավ իրրև Արևելքի ճնշված ժողովուրդների, այդ թվում և Թյուրք ժողովրդի ազգային անկախության համար մղած պայքարի միակ ու հետևողական պաշտպան։ Հայտնի է, որ իր ազգային անկախության համար մղած ծանր պայքարի տարիներին, երբ Թյուրքիային, իրրև պետության, մահացու վտանգ էր սպառնում, Սովետական իշխանությունը եղբայրական ձեռք մեկնեց Թյուրքական ժողովրդին, նրան ցույց տալով բարեկամական օգնություն։ Հայտնի է, որ այդ օգնությունը վճռական դեր խաղաց օտարերկրյա ինտերվենտների դեմ Թյուրք ժողովրդի մղած ազատագրական պայքարում։

Գրքի հեղինակը քննադատում է սովետական պատմագրական առանձին երկերում տեղ գտած այն սխալ տեսակետը, ըստ որի իբր թե Անտանտայի ուժերի դեմ քեմալիստների տարած հաղթանակը արդյունք է վերջիններիս ցուցաբերած հերոսության և մուսուլմանական երկրներում, հատկապես Հնդկաստանում ռևոլյուցիոն շարժման նկատմամբ Անգլիայի երկյուղի։ Մինչդեռ, ազգային անկախության համար մղվող պայքարի հաղթանակին նպաստող կարևորագույն և վճռական գործոններից մեկը Սովետական Ռուսաստանի գոյության փաստն էր, որը ոգեշնչող օրինակ էր հանդիսանում իրենց ազգային անկախության համար մարտնչող Արևելքի ժողովուրդների համար և որի դեմ էին ուղղված Անտանտայի հիմնական դինված ուժերը։

Զգեստ է անտեսել, որ իմպերիալիզմի դեմ քեմալիստների մղած պայքարը 1920-ական թվականներին ուներ պրոգրեսիվ կողմեր։

Այնուհետև գրքում բերված փաստերը ցույց են տալիս, որ Քեմալ փաշայի գլխավորած թյուրքական բուրժուազիան՝ դավաճանելով իր երկրի ազգային շահերին, դաշն էր կնքել անգլիական իմպերիալիստական դավթիչների հետ ընդդեմ Թյուրք բանվորների և գյուղացիների։ Քեմալիստական ռևոլյուցիան,— նշում է Ի. Վ. Ստալինը,— «... ըստ էության, ուղղված է գյուղացիների ու բանվորների դեմ, ազգաբային ռևոլյուցիայի բուն իսկ հնարավորությունների դեմ» (Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 9, էջ 285)։ Գրախոսվող գրքում բերված են նաև հայ ժողովրդի նկատմամբ քեմալական ավազակային հրոսակների գործած ոճրագործությունները և գազանությունները մերկացնող փաստերը։

Հեղինակը ցույց է տալիս, որ գյուղատնտեսության ասպարեզում քեմալական կառավարության ագրարային ռեակցիոն քաղաքականությունը ամրապնդում էր կալվածատերերի, կուլակների դիրքերը գյուղում, ի հաշիվ աշխատավոր գյուղացիության դաժան կեղեքման և իր սուր ծայրով ուղղված էր աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն հուզումների դեմ։ Թյուրք գյուղացիության առանց այն էլ անմխիթարական վիճակը էլ ավելի վատթարացավ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Թյուրքիայի ռեակցիոն կառավարողները բանվորների և գյուղացիների բարբարոսական շահագործ-

ման ու կոդոպտման հաշվին մորիլիզացրին մեկ միլիոնի հասնող բանակ և երկրի ողջ ստրատեգիական հումքը և պարենավորումը ի սպաս դրին հիտլերյան իմպերիալիզմի շահերին։ Երկրի գյուղացիների վերին աստիճանի աղքատիկ վիճակի մասին է վկայում այն փաստը, որ այստեղ հողազուրկ գյուղացիների թիվը հասնում է 6 միլիոնի։ Թյուրք գյուղացիության միայն 7 տոկոսն է, որ ապահովված է իր գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ հողակտորով։

Բուրժուազիայի և կալվածատերերի շահերն արտահայտող բեմալիստները՝ անցնելով իշխանության գլուխ, չտեսնված տեռոր կազմակերպեցին բանվոր դասակարգի դեմ, դաղանաբար սպանեցին Թյուրքիայի Կոմունիստական պարտիայի առաջնորդ Մուստաֆա Սուբխիին։ Պատերազմի տարիներին Թյուրքիայի ռեակցիոն կառավարողները իրենց երկրի էկոնոմիկան ծառայեցնելով հիտլերյան Գերմանիայի շահերին, երկիրը կանգնեցրին կատաստրոֆի առաջ։ Երկրում միլիոնավոր աշխատավորներ ենթարկվեցին սովի և համաճարակի արհավիրքին։ Թյուրքիայում առանձնապես ծանր է ազգային փոքրամասնությունների վիճակը, որոնք մասսայարար բնաջնջվում են ռեակցիոն կառավարող շրջանների շովինիստական քաղաքականության հետևանքով։

Գրքում ցույց է տրված, որ լուրջ ճգնաժամ է ապրում նաև գյուղատնտեսությունը, որը կազմում է Թյուրքիայի էկոնոմիկայի հիմքը։ Երկրի մշակվող հողը գլխավորապես կենտրոնացված է խոշոր կալվածատերերի և կուլակների ձեռքում, իսկ գյուղացիության ճնշող մեծամասնությունը կազմում են հողազուրկները և սակավ հող ունեցողները։

Երկրի նյութական ռեսուրսների օգտագործումը համաշխարհային պատերազմի նախապատրաստման նպատակին խարխլում է Թյուրքիայի էկոնոմիկան, էլ ավելի անտանելի դարձնում աշխատավոր մասսաների ծայրահեղ աղքատիկ վիճակը։ Թյուրքիայում էկոնոմիկայի միլիտարիզացման, ապրանքների գների սիստեմատիկ բարձրացման և բանվորների ծայր աստիճանի ցածր աշխատավարձի հետևանքով գնալով ավելի և ավելի ուժգնորեն իջնում է աշխատավորների կենսամակարդակը։ Երկրի էկոնոմիկան ռազմականացնելու հետևանքով չտեսնված չափերով աճում են բանվորներից և գյուղացիներից գանձվող ուղղակի և անուղղակի հարկերը։

Երկրում անուշադրության է մատնված ժողովրդական կրթության գործը։ Բավական է նշել, որ Թյուրքիայի 28000 գյուղերում չկան նույնիսկ տարրական դպրոցներ։

Գրախոսվող գրքի վերջում հեղինակը համառոտակի կանգ է առնում ներքին և արտաքին ռեակցիայի դեմ Թյուրքիայի աշխատավորական մասսաների մղած պայքարի վրա, ցույց տալիս, որ երկրի բանվոր դասակարգն ու գյուղացիությունը, չնայած բռնակալական-ոստիկանական ռեժիմին, համառ պայքար է մղում ընդդեմ օտարերկրյա կեղեքիչների, ներքին ռեակցիայի, հանուն իրենց երկրի ազգային անկախության պաշտպանության, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, խաղաղության ու ազատության։

Ե. Սարգիսովի «Աշխատավոր մասսաների դրությունը ժամանակակից Թյուրքիայում» աշխատության կարևոր նշանակությունը այն է, որ նրա հեղինակը ընթերցող հասարակայնությանը ծանոթացնում է Թյուրքիայի աշխատավորության դժոխային պայմանների հետ։

Գրախոսվող գիրքը դերծ չէ առանձին թերություններից։ Այսպես, հեղինակը կանգ չի առնում Թյուրքիայի տերիտորիայում ռազմա-ռազմական և ծովային բազաների կառուցման փաստի վրա, որոնք ուղղված են ՍՍՀՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ և միաժամանակ ծառայում են որպես պայքարի հենակետեր Թյուրքիայի բանվոր դասակարգի և գաղութներում ազգային-ազատագրական շարժման դեմ։ Գրքի հեղինակը անցնում է այն փաստի կողքով, որ Թյուրքիան հանդիսանում է Հյուսիս-ատլանտյան բլոկի մասնակից։

Գրախոսվող գրքի հեղինակը կանգ չի առնում Թյուրքիայի ու Իրաքի միջև ռազմական դաշինքի հարցի վրա, որի նպատակն է վերածել վերջինիս ռազմական պլացդարմի՝ ընդդեմ սոցիալիզմի ու դեմոկրատիայի լագերի երկրների։ Գրախոսվող աշխատության 97-րդ էջում նշվում է Թյուրքիայի 1952 թ. ռազմական ծախքերի քանակը։ Մինչդեռ ներկայումս բազմապատկվել ու եռապատկվել են այդ ծախքերը։ Այսպես, 1955 թ. Թյուրքիայի պատմության մեջ չտեսնված թիվ են կազմում ռազմական ծախքերը՝ 5 միլիարդ լիրա։

Սակայն այս թերությունները չեն նսեմացնում գրախոսվող գրքի նշանակությունը։

Ա. Հարությունյան